ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«11» ապրիլի 2022թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ի, ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ի, Գուրգեն Քարտալյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ն, ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ն, Գուրգեն Քարտալյան ԱՁ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ի, ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ի, Գուրգեն Քարտալյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 4-րդ չափաբաժնի մասով Գուրգեն Քարտալյան ԱՁ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ի հայտը մերժել,
- 4-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ի, ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի, Ջուզեպպե ՍՊԸ-ի, ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, Տ-Ինդասթրի ՓԲԸ-ի, Գուրգեն Քարտալյան ԱՁ-ի, 2-րդ չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի, Ջուզեպպե ՍՊԸ-ի, ԱՌՆԱՏԱՐ ՍՊԸ-ի, ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, ՆԱՐՎԱԿԻ ՍՊԸ-ի, Տ-Ինդասթրի ՓԲԸ-ի, Գուրգեն Քարտալյան ԱՁ-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի, Ջուզեպպե ՍՊԸ-ի, ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, Տ-Ինդասթրի ՓԲԸ-ի, 4-րդ չափաբաժնի մասով՝ Ֆոտոն ՍՊԸ-ի, Ջուզեպպե ՍՊԸ-ի, ՎԱՆԴԵԿՈՐ ՍՊԸ-ի, Տ-Ինդասթրի ՓԲԸ-ի, 5-րդ չափաբաժնի մասով՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի, 6-րդ չափաբաժնի մասով՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, Լեվան ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, 8-րդ չափաբաժնի մասով՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի, 9-րդ չափաբաժնի մասով՝ Ջուզեպպե ՍՊԸ-ի, Մեգաօֆիս ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգը 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝ _____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան